ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վախթանգ Միրումյանի՝ Բելգիայի Թագավորություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վախթանգ Միրումյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 2017թ. դեկտեմբերի 13-15-ը

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիա:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մասնակցություն Համաշխարհային մաքսային կազմակերպության Մաքսային համագործակցության խորհրդի 131-րդ արտահերթ նստաշրջանին:

6. Քննարկված թեմաները՝

Խորհրդի 131-րդ նստաշրջանի ընթացքում ի թիվս մի շարք կարևոր հարցերի, տեղի է ունեցել ՀՄԿ գլխավոր քարտուղարի տեղակալի արտահերթ ընտրություններ, որի համար առաջադրվել էին երկու թեկնածություններ՝ Մեքսիկայից և Կամերունից: Ընտրությունների արդյունքում այդ պաշտոնին ընտրվեց Մեքսիկայի ներկայացուցիչը:

Քննարկվել է նաև Կոսովոյի՝ Համաշխարհային մաքսային կազմակերպությանն անդամակցելու հարցը: Որոշում կայացվեց ստեղծել աշխատանքային խումբ և հարցի քննարկումը շարունակել այդ աշխատանքային խմբի շրջանակներում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՄԿ տարեկան նստաշրջանները լայն հարթակ են հանդիսանում նաև երկկողմ հանդիպումների համար: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Վ. Միրումյանն անցկացրեց երկկողմ հանդիպում Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավարի հետ, քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր և ուրվագծվեցին հետագա համագործակցության հեռանկարները: Հստակեցվեցին Իրանի

Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավարի Հայաստանի Հանրապետություն կայանալիք այցի ժամկետները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նստաշրջանների ընթացքում քննարկվեցին մաքսային ոլորտին վերաբերող հարցերի լայն շրջանակ, ինչպես նաև հարցեր կապված ոչ սակագնային արգելքների, էլեկտրոնային առևտրի, սահմանների վերահսկողության, տնտեսական մրցունակության աջակցության, կարողությունների զարգացման, առևտրի դյուրացման հետ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում կայացվեց 2018 թվականի հունիս ամսին ք. Բրյուսելում հրավիրել ՀՄԿ հերթական 132/133-րդ նստաշրջանները:

10. Գործուղվողը՝

Վախթանգ Միրումյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

18.12.2017թ.